Հաշվետվություն

2017թ. հոկտեմբերի 16-ից 18-ը Բելառուսի մայրաքաղաք Մինսկում կայացած ՀԱՊԿ արտակարգ իրավիճակների համակարգող խորհրդի (ԱԻՀԽ) 10-րդ նիստի

1. **Անունը, ազգանունը**

   Դավիթ Տոնոյան

2. **Զբաղեցրած պաշտոնը**

   ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար

3. **Գործուղման վայրը և ժամկետները**

   Բելառուսի Հանրապետություն, քաղաք Մինսկ, 2017թ. հոկտեմբերի 16-ից 18-ը

4. **Հրավիրող կողմը**

   Բելառուսի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն

5. **Գործուղման նպատակը**

   Մասնակցություն ՀԱՊԿ արտակարգ իրավիճակների համակարգող խորհրդի (ԱԻՀԽ) 10-րդ նիստին

6. **Քննարկված թեմաները**

   1. Արտակարգ իրավիճակներում տուժածներին օգնության ցուցաբերման գործում միջազգային կազմակերպությունների ներուժի օգտագործման հեռանկարների մասին:
   2. ՀԱՊԿ արտակարգ իրավիճակների լիազոր մարմինների համակարգող խորհրդի գործունեության կազմակերպման համար վարժանքների և այլ համատեղ միջոցառումների 2017թ. ծրագրի իրագործման մասին:
   3. ՀՀ տարածքում Հայ-ռուսական հումանիտար արձագանքման կենտրոնի ստեղծման ընթացքի մասին:
   4. <<Արտակարգ իրավիճակներին ՀԱՊԿ անդամ պետությունների արձագանքման մասին>> ՀԱՊԿ հավաքական անվտանգության խորհրդի 2016թ. հոկտեմբերի 14-ին ընդունված որոշման իրագործման մասին:

5. ՀԱՊԿ օպերատիվ արձագանքման հավաքական ուժերի հրամանատարության օպերատիվ խմբում նշանակված արտակարգ իրավիճակների կանխարգելման և հետևանքների վերացման իրավասու մարմինների ներկայացուցիչների և հատուկ նշանակության ուժերի ձևավորման կազմում ընդգրկված ստորաբաժանումների հրամանատարների ուսումնամեթոդական հավաքների անցկացման մասին:
6. Խոշորամասշտաբ արտակարգ իրավիճակների կանխարգելման կամ հետևանքների վերացման ՀԱՊԿ անդամ պետությունների համատեղ արձագանքման Կանոնակարգի նախագծի մշակման ընթացքի մասին:
7. ՀԱՊԿ անդամ պետությունների արտակարգ իրավիճակների կանխարգելման և հետևանքների վերացման ոլորտում իրավասու մարմինների փոխգործունեության միջոցառումների ծրագրի մասին և այլն:
8. Այլ հարցերի մեջ քննարկվեց նաև Սպիտակի երկրաշարժի 30-ամյակին նվիրված միջոցառումների անցկացման և մասնակցության հարցը:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

2017թ. հոկտեմբերի 16-ից 18-ը Մինսկ կատարած աշխատանքային այցի շրջանակներում հանդիպումներ եմ ունեցել Բելառուսի Հանրապետության վարչապետ Անդրեյ Կոբյակովի, Բելառուսի Հանրապետության ԱԻ նախարար Վլադիմիր Վաշչենկոյի, ՌԴ ԱԻ նախարար Վլադիմիր Պուչկովի, ՀԱՊԿ Գլխավոր քարտուղարի տեղակալ Վալերի Սեմերիկովի, Ղազախստանի Հանրապետության ՆԳ նախարարի տեղակալ Յուրի Իլյինի, Ղրղզստանի Հանրապետության ԱԻ նախարարի տեղակալ Կալիս Ահմատովի, Տաջիկստանի Հանրապետության կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության կոմիտեի նախագահ Ռուստամ Նազարզոդայի հետ:

Քննարկվել են ՀԱՊԿ օպերատիվ արձագանքման հավաքական ուժերի հրամանատարության օպերատիվ խմբում նշանակված արտակարգ

իրավիճակների կանխարգելման և հետևանքների վերացման իրավասու մարմինների ներկայացուցիչների և հատուկ նշանակության ուժերի ձևավորման կազմում ընդգրկված ստորաբաժանումների հրամանատարների հետ ուսումնամեթոդական հավաքները ՀՀ-ում անցկացնելու, ՌԴ և Բելառուսի փրկարարական հատուկ տեխնիկայի ՀՀ-ում փորձարկելու և հետագայում ձեռքբերման հարցերը:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**

Ընդունվել և հաստատվել են ՀԱՊԿ արտակարգ իրավիճակների համակարգող խորհրդի (ԱԻՀԽ) 10-րդ նիստի օրակարգային բոլոր հարցերը:

ՀԱՊԿ ԱԻ համակարգող խորհուրդը որոշեց ՀԱՊԿ օպերատիվ արձագանքման հավաքական ուժերի հրամանատարության օպերատիվ խմբում նշանակված իրավասու մարմինների և հատուկ նշանակության ուժերի ստորաբաժանումների ուսումնամեթոդական հավաքն անցկացնել 2018թ. առաջին կիսամյակում, Երևանում, իսկ կոնկրետ ժամկետն՝ ըստ ՀՀ ԱԻՆ-ի կողմից ՀԱՊԿ քարտուղարություն ներկայացվող առաջարկության (ժամկետը՝ 22.02.2018թ):

Ուսումնամեթոդական հավաքին նախատեսվում է 2-ական ներկայացուցչի մասնակցություն յուրաքանչյուր անդամ պետությունից, որոնց սննդի և տեղաշարժի խնդիրը պետք է լուծի ընդունող կողմը (ՀՀ-ն):

Որոշվեց նաև 2018թ. դեկտեմբերի 6-ից 8-ը Հայաստանում անցկացվելիք Սպիտակի երկրաշարժի 30-ամյակին նվիրված միջոցառումներին մասնակցել արտակարգ իրավիճակների համակարգող խորհրդի անդամների գլխավորած պատվիրակությունների ձևաչափով (2-3 հոգի), այդ թվում օժանդակել Սպիտակի երկրաշարժի հետևանքների վերացման մասնակիցների հայտնաբերման և ՀՀ ԱԻՆ-ին տեղեկացման գործում:

Բելառուսի ԱԻ նախարարի հրամանով ՀԱՊԿ ԱԻՀԽ բոլոր անդամները պարգևատրվել են ՀԱՊԿ ԱԻՀԽ 10-ամյակի մեդալներով: ՀԱՊԿ գլխավոր

քարտուղարի հրամանով ՀԱՊԿ ԱԻՀԽ բոլոր անդամները պարգևատրվել են ՀԱՊԿ 25-ամյակի հուշամեդալներով:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները**

Առաջարկություն է եղել ՀԱՊԿ ԱԻՀԽ հերթական 11-րդ նիստն անցկացնել Ղազախստանի Հանրապետությունում: ՀԱՊԿ ԱԻՀԽ նոր նախագահ է ընտրվել Ղազախստանի ՆԳ նախարարի տեղակալ Յուրի Իլյինը, քարտուղար՝ Ղազախստանի ՆԳՆ արտակարգ իրավիճակների կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ Արմայիս Գրիգորյանը:

10. **Գործուղվողը**

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար Դավիթ Տոնոյան

11. **Ստորագրությունը, ամսաթիվը**

20.10.2017թ.: